

ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ.

Կայսր Ռուսաց.

Եջերնիա քիչ և նիւթերնիա մեծ . ա-
նոր համար ոչ թէ ընդարձակ տեղե-
կութիւն մը տալ է հոս մտքերնիա Ա-
ղեքսանդր Բ. վնասաւա կայսեր վարույ
վրայ, այլ կենսադրական համառօտու-
թիւն մը :


Ծնաւ Աղեքսանդր 'ի 29 ապրիլի 1818
տարւոյն . և կրթեցաւ նախ իր Աղեք-
սանդրա Ֆէոտարովնա մօրմէն, յետոյ
Մէրտէր զօրավարէն, և Եուքովսի բա-
նաստեղծէն : Բայց զլիաւորապէս իր
գտատիրակութիւնն ընդունեցաւ հօր-
մէն՝ Նիկողայոս կայսերէն, որ ջանաց
կայսերական դահլոյն արժանի գահա-
կալ պատրաստել իւր որդին . և զինուո-
րական զգեստ հագուեցնելով անոր՝
ինքն իսկ կը կրթէր զԱղեքսանդր պա-
տերազմական վարժից : 1834 տարւոյն
մայիսի 4ին չափահաս հրատարակուե-
ցաւ արքայորդին . միանգամայն պահա-
պան զօրաց նիզակաւոր գնդին հրամա-
նատար էր, ձիաւոր խազախաց աքա-
ւնն, և կայսեր պատերազմի առաջին
սպայն : Սակայն իր փափուկ և երիտա-
սարդական կազմուածքը չկրնալով վար-
ժիլ զինուորական կենաց սովորութեան-
ցը, հիւանդացաւ : Մէկէն հրաման ե-
ղաւ իրեն երթալ 'ի Գերմանիա և ան-
զբաղ կենօք բժշկիլ . այս ճանապարհոր-
դութիւնը շատ հանգիստաւոր եղաւ, և
Հեսսէ-Տարմըշդատի դքսին քով կեցած
միջոցը՝ նշանուեցաւ Լուդովիկոս Բ. մեծ
դքսին աղջրկան՝ Մարիամ՝ իշխանու-
հւոյն հետ, 1841 տարւոյն :

1846 տարւոյն յունուարի 11էն 'ի
վեր Ֆինլանտիոյ համալսարանին վերա-
կացու անուանած էր . ճարտար խնամ-
քով ջանաց զՖինլանտիացիա շահելու,
և սիրցնել տալու անոնց իրենց տեար-
քը : Ֆինլանտական լեզուին և գրակա-
նութեան գտաախօսութիւն հաստա-

տեց, գրականաց ճեմարանին պաշտ-
պանութիւնն յանձն առաւ, և Սիկ-
նէոս, Վալլին և Գասդրէն Ֆինլանտացի
գիւնոց ուսումնական հեռաւոր արշա-
ւանաց ծախքն ինքն հոգաց : Անոր հա-
մար իր պաշտաման քսանըհինգերորդ
տարեգարձն ազգային հանդիսի մը պէս
կատարուեցաւ յէլսինկֆորս 1851 տա-
րւոյն, յունուարի 11ին : Նոյն միջոցին
ամբողջ կայսերութեան զինուորական
զաւրոյններուն վերատեսչութեան հոգն
ալ իր վրայ էր . և այնպէս յաջողեցաւ
'ի մասինս, որ Նիկողայոս կայսրը զե-
ղուն սրտիւ կը գովէր զինքը :

1850ին պտրտեցաւ 'ի հարաւային
Ռուսաստան, 'ի Նիգոլայէֆ, Սեւաստո-
բոլ, Տիբիսիս, Երեւան և Գարբանտ . և
այս երկամսեայ ճանապարհորդութիւ-
նը լմնացուց Չէրէզդներու դէմ քաջու-
թեամբ մը, որուն վարձք ընդունեցաւ
հօրմէն՝ Վորոնցով իշխանին վկայու-
թեամբն և խնդրանքը, Ս. Գէորգայ
պատուանշանը : 1855 տարւոյն մարտի
2ը՝ իր հօրը վերջին օրն եղաւ . և երբ
Աղեքսանդր Բ. բարձրացաւ 'ի գահն կայ-
սերական, արդէն իսկ գաղղիական և
անգղիացի զէնքերը կը բաղխէին Ռու-
սաց քաջութեանն հետ : Երգուաւ իր
հօրը բռնած ճամբէն չխտորելու . հան-
դերձ այսու աւելորդ արիւնհեղութիւնը
խնայելու, և ցանկացեալ խաղաղու-
թիւնը շնորհելու գիտմամբ, զիջաւ խա-
ղաղութեան պայմաններուն, որով լու-
ցին պատերազմի անօթները :

Անկէ ետե ուղեց բոլոր իր ուշադրու-
թիւնը պետութեան ներքին վիճակին
վրայ դարձրնել : Նէսսէլրոտ կոմսին
հրաժարումն ընդունելով՝ զկորչաքով
իշխանն անուանեց արտաքին գործոց
պաշտօնեայ . և պաշտօնէից երկուքը հա-
նելով իրենց պաշտամանէն և ուրիշ ա-
ռիթներու մէջ ալ, յայտնի իմացուց որ ա-
մենայն բարեկարգութիւն կը պահանջէր
խառիւ տէրութեան իշխանաւորներէն :
Հասարակաց կրթութեան վիճակը շատ
բաւյուց նորընտիր կայսրն Ռուսիոյ մէջ .
համալսարանաց աշակերտներուն թիւն
աւելցուց, զինուորականներն 'ի բաց



առաւ ուսուցչութենէ, արեւելեան լե-
զուաց ուսումնարան հաստատեց Բեդր-
պուրկի համալսարանին մէջ. հուսկ ու-
րեմն 1856 տարւոյն՝ նոր սկզբանց վրայ
հիմնելով հասարակաց կրթութիւնը՝
ուզղակի իր հսկողութեանը ներքե ա-
ռաւ: Այլ որ քան զամենայն կը պա-
տուէ իր մտաց ազնուականութիւնն ու
կամաց ոյժը, դերեաց ազատութիւնն
եղաւ, զոր յաջողեցուց յաղթանակե-
լով ամեն դժուարութեանց. այս գործը
քաղաքականութեան յիշատակագրու-
թեանց մէջ պիտի անմահացնէ իր ա-
նունը. որովհետեւ հաւասարութեան ըս-
կըզբունքը ինքն եղաւ մոցընող Ռու-
սիոյ մէջ: Իսկ իր արտաքին քաղաքա-
գիտութեանը գալով, մասնաւոր բարե-
կամութեամբ միացած կ'երեւայ Նարո-
ւէնի Գ. կայսեր հետ. ինչպէս որ միշտ
և մասնաւորապէս իր թագադրութեան
հանդէսներուն միջոցն (7 սեպտեմբեր
1856) և Շղուզկարտի տեսութեամբն
(սեպտ. 1857) ցրցուց: Այսօրուան օրս
զբաղած է լեհաստանի խռովութիւնն
ընկճելու:

Նոր առաջարկութիւն մը.

Միջերկրական և Ովկիանոս ծովերը
իրարու հետ միացնելու համար՝ ջը-
րանցք մը բանալու նոր առաջարկու-
թիւն մը կը լսուի, որ Զրանցք Նարո-
ւէնի պիտի կոչուի: Քրուայ անունով
անձ մը մտածեր է այս խորհուրդը: Մի-
ջերկրական ծովը Ովկիանոսի հետ պի-
տի հաղորդէ այս ջրանցքը և Մարսիլիան
Տէօնքէրքի հետ՝ անցնելով Ռան, Սէն,
և այլն, ձորերուն մէջէն: Այս Նարո-
ւէնի ջրանցքը պիտի ըլլայ կերպով մը
իրեն շարունակութիւն Սիւէզի ջրանց-
քին՝ Գազզիոյ երկրին մէջէն անցնելով,
և իբրեւ աւելի կարճ ճամբայ մը դէպ ի
հիւսիսային կողմի ծովերը՝ երթալու:

Տաւ մը տնտեսութեան վրայ հար-
կաւոր գիտելիք.

Եւրոպայի մէջ շատ տեղ սովորու-
թիւն է տախտակամած ընել խուցե-
րուն յատակը ազնիւ ընկուզի կամ ուրիշ
պինդ տախտակով, մանր կտորուանք-
ներէ, զորոնք այլևայլ ձևերով յար-
մարցուցած՝ մաքուր կը փայլեցնեն:
Այս տեսակ տախտակամածը թէ ա-
ռողջութեան կ'օգնէ և թէ մաքրու-
թեան: Առողջութեան կ'օգնէ՝ տախ-
տակ սրբելու պէտք չունենալով. որով-
հետեւ տախտակ սրբելը թէ սրբողնե-
րուն ֆիսասակար է, և թէ տանը բնա-
կիչներուն՝ տանը մէջ խոնաւութիւն
պատճառելով: Մաքրութեան ալ կ'օգ-
նէ՝ փոշիները դիւրաւ մաքրուելով: Արդ
թէ որ ուզէ մէկը փայլուն տախտակա-
մած ընել իր տանը խուցերն ու սրահ-
ները, ահա այս է փայլեցնելու կերպը:
Մէկ ոխա ջրոյն մէջ 60 տրէմ փոթաս
խառնէ և կէս ոխայ ալ դեղին մեղրա-
մամ, ու կակուղ կրակի վրայ դիր որ
հալի մեղրամամը. այս խառնուրդը եր-
բոր պաղի՝ թէ որ խիստ թանձր ըլլայ,
վրան այնչափ ջուր աւելցու՝ ինչուան որ
դիւրաւ տարածելի ըլլայ. այն ատենը
մէկ մեծ վրձինով մը տախտակամածին
վրայ քսէ ըստ կարի բարակ և հաւա-
սար տարածելով, ու քիչ մը թող՝ որ
աղէկ մը ցամբի. և ետքը կտորուանք
բրդէ լաթէ կծիք մը ըրած ու աւելի
կոթի մը ծայրը անցուցած՝ անով չփէ
ինչուան որ փայլի:

Բայց այսպէս փայլեցուցած տախտա-
կամածին փայլունութիւնը երբոր պակ-
սի, այն ատենը պարզ դեղին մեղրա-
մամի կտոր մը երկայն փայտի մը ծայրը
հաստատած տախտակամածին վրայ
քսելէն ետեւ՝ չփելով կը նորոգեն փայ-
լունութիւնը: